ԱՐՑԱԽ. ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱՎՈՐԵՍ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԿԱՆՑԿԱՑՆԵՍ

Հայաստանի եռագույն ազգ-խորհրդանիշ դրոշն է Արցախում մարզային կենտրոնի գլխավոր տոնածառի կատարին: Քաղաքի գեղեցկուհու տոնական հանդերձի այդչափ արտասովոր հանդիսազարդի համար գաղը բնավ էլ պատահական չէ: Չէ՞ որ պատմության գիրկն անցնող 1989 թվականը ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեց, ու այսուհետև Արցախն ու Հայաստանը միասին կլինեն ուրախության, թե վշտի պահին: Դրա վկայությունն են հայրենակիցների ներկայիս նախամանորյա հոգսերը: Ղարաբաղի երեխաներին գրեթե 30 հազար նվերներ է ուղարկել ՀԱՄԽ-ը: Տոնական միջոցառումներ կանցկացվեն ինքնավար մարզի գրեթե բոլոր դպրոցներում և նախադպրոցական հիմնարկներում: Իսկ մեծահասակները հաճելիորեն զարմացած կլինեն տարվա վերջին օրը այցելելով Ստեփանակերտի քաղաքային մարզադաշտ: Մուտքի մոտ նրանց կդիմավորեն ղարաբաղյան բանահյուսության կենդանի տիպարներ: Երգեր, պարեր, Հայաստանից ժամանած համերգային խմբի ելույթ, տոնավաճառ. ահա ամանորյա երեկույթի կազմակերպիչների՝ արհեստակցական միությունների, մարզային խորհրդի աշխատողների մտահղացած զբաղվածությունների ոչ լրիվ ցուցակը: Այցելուներից ամենահակը: Այցելուներից ամենահաջողակը տուն կվերադառնա արտասովոր նվերով, որը նա ինքը կմատուցի իրեն: «Ժիգուլի» մեքենան արդեն սպասում է տիրոջը: Նրան կտիրանա իրային վիճակախաղի երջանիկ տոմսի տերը, որը խաղարկվելու է տարեմուտի գիշերը: Իզուր չի ասվում, որ ինչպես դիմավորես նոր տարին, այնպես էլ կանցկացնես:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի թղթ.)
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ